# ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՈՒՆՈՒՄ «ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ՀԱՅՑԵՐ ԸՆԴԴԵՄ ՀԱՆՐԱՅԻՆ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅԱՆ (SLAPP)» ԴԱՏԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՆԵՐԻ ԵՎ ԴՐԱՆՑ ՀԵՏԵՎԱՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետությունում «Ռազմավարական հայցեր ընդդեմ հանրային մասնակցության (SLAPP)» դատական գործընթացների ուսումնասիրությունը և վիճակագրությունը ցույց է տալիս, որ վերջին տարիներին, մասնավորապես՝ 2017 թվականից մինչ 2025 թվականը աճել են խոշոր մասնավոր հանքարդյունաբերող և այլ կազմակերպությունների, պետական մարմինների, քաղաքական գործիչների, բարձրաստիճան պաշտոնատար անձանց կողմից ընդդեմ բնապահպանների, լրագրողների ու զանգվածային լրատվական միջոցների դեմ ներկայացված դատական հայցերի քանակը:

Որպես կանոն, դրանք դրսևորվում են վիրավորանքի ու զրպարտության հիմքով, որով ներկայացված հայցերով դատարանից հայցվորները խնդրում են պարտավորեցնել նշված անձանց կամ հերքելու իրենց հրապարակային և այլ գործունեության ընթացքում կատարված հրապարակային խոսքը, նեղություն խնդրել կատարված արտահայտությունների համար, փոխհատուցել վիրավորանքի համար մինչև 3,000,000 (երեք միլիոն) ՀՀ դրամի չափով, իսկ զրպարտության պարագայում՝ մինչև 6,000,000 (վեց միլիոն) ՀՀ դրամի չափով գումար:

Մասնավորապես, վերը նշված իրավահարաբերությունները կարգավորող ՀՀ քաղաքացիական օրենսգրքի՝ «Պատվին, արժանապատվությանը կամ գործարար համբավին պատճառված վնասի հատուցման կարգը և պայմանները» վերտառությամբ 1087.1-ին հոդվածը մինչև 2021 թվականը սահմանում էր վիրավորանքի համար մինչև 1.000.000 (մեկ միլիոն) փոխհատուցման հնարավորություն, իսկ զրպարտության պարագայում մինչև 2.000.000 (երկու միլիոն) փոխհատուցում:

ՀՀ ազգային ժողովի գործող իշխանության օրենսդրական նախաձեռնությամբ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1087.1-ին հոդվածը լրացվել է 24.03.2021թ. ՀՕ-330-Ն օրենքով, որով վիրավորանքի համար սահմանված՝ 1.000.000 (մեկ միլիոն) ՀՀ դրամ փոխհատուցման գումարը փոփոխվել է դարձվելով 3.000.000 (երեք միլոին) ՀՀ դրամ, իսկ զրպարտության պարագայում՝

մինչև 2.000.000 (երկու միլիոն) փոխհյատուցում փոփոխվել և դարձվել է 6.000.00 (վեց միլիոն ՀՀ դրամ) :

Վերը նշված օրենսդրական փոփոխությունը ևս հիմք են հանդիսացել Հայաստանում ընդդեմ հանրային մասնակցության (SLASPP) հայցերի զգալի ավելացման վրա:

Հիշատակված հայցերի ստված զանգվածը բաժին է հասնում Հայաստանում գործող խոշոր հանքարդյունաբերող կազմակերպությունների կողմից հայցերի հարուցմանը («Լիդիան Արմենիա» ՓԲ Ընկերությունը, որը երկրաբանահետախուզական ընկերություն, է և հավակնում է շահագործել Վայոց ձորի մարզում գտնվող Ամուլսարի տարածքում համանուն ոսկու հանքավայրը, ինչպես նաև «Զանգեզուրի Պղնձամոլիբդենային կոմբինատ» ՓԲ Ընկերությունը, որը ևս Հայաստանում գործող խոշոր հանքարդյունահանող, հանքավերամշակման, հանքարդյունաբերական ձեռնարկություն է ):

Այսինքն, ներկայացված հայցերով հայցվորները նախաձեռնում են անհարկի ու երկարատև դատական գործընթացներ, որպեսզի պատասխանողները կրեն վնասներ ինչպես ֆինանսական, այնպես էլ՝ բարոյական, ներկայացնում են վնասի փոխհատուցման խոշոր պահանջներ կամ ներկայացնում են նշված գումարների մասով որպես հայցի ապահովման միջոց պատասխանողների գույքերի և դրամական միկջոցների վրա արգելանքներ կիրառելու մասին միջնորդություններ, որոնց բավարարման դեպքում պատասխանողները հաճախ հայտվում են անելանելի վիճակում, իսկ որոշ դեպքերում ստիպված են լինում, ոչ իրենց կամքով դադարեցնել հանրային գործունեությունը կամ իրենց կամքին հակառակ՝ էապես նվազեցնել քննադատության ծավալն ու գործել էլ ավելի զգուշորեն:

Ներկայացված հայցերը հաճախ հենվում են անհիմն, մակերեսային կամ չափազանցված պահանջների վրա, դրանք քողարկվում են հայցի ձևական իրավական բովանդակությամբ և ներկայացվում են ինչպես նշվեց՝ նշված անձանց վրա ճնշում գործադրելու, այլ ոչ թե իրավունքը իրականում պաշտպանելու նպատակով:

Ներկայացված հայցերը որպե կանոն վերաբերում են այն հրապարակներին, որոնցով բարձրաձայնվում են.

1. Խոշոր հանքարդյունաբերող և այլ կազմակերպությունների կողմից ուղղակի կամ անուղակի կոռուպցիոն դրսևորումներին, նշված միջոցներով լիցեզիանների ստացմանը

2. Թերի փորձաքննությունների իրականացմանը և դրանց արժանահավատությանը
3. Բնապահպանական ստուգումների իրականացման, ինչպես նաև հանքավայրի շահագործման ընթացքում անվտանգության ապահովման ընթացքում կատարված չարաշահումներին
4. Ընկերությանը աջակցելու համար լրատվամիջոցները և փորձագետներին վարձատրելուն
5. Ընկերությունների կողմից կեղծ /ֆեյք/ էջեր հավաքագրելուն և կառավարելուն
6. Ընկերությունների կողմից տարբեր բնույթի բախումներ հրահրելուն և պրովակացիաներ իրականացնելուն
7. Պաշտոնատար անձանց և կազմակերպությունների կապերին, ինչպես նաև նշահերի բախմանը
8. Հանքարդյունաբերող կազմակերպությունների կողմից տարբեր հիմնադրամներին կատարված նվիրատվությունների և դրանք ոչ հրապարակային լինելուն
9. Հանքարդյունաբերական կազմակերպության թափոնների արտահոսքի հետևանքով շրջակա միջավայրի աղտոտմանը և դրա հետևանքներին, պետության կողմից դրա վերաբերյալ դրսևորված անգործությանը
10. Պնապահպանական բնույթի հայտարարությունների, ներառյալ՝ հնարավոր բնապահպանական ռիսկերին և վնասներին
11. Բնության աղտոտման հետևանքով քաղաքացիների առողջությանը պատճառված վնասներին և այլն…

Վերը նշված հրապարակումների զգալի մասը վերաբերել են հենց խոշոր հանքարդյունաբերող կազմակերպությունների կողմից ուղղակի կամ անուղակի կոռուպցիոն դրսևորումներին և նշված միջոցներով տարբեր լիցեզիանների ստացմանը, որի վերաբերյալ կատարված ցանկացած հրապարակում զերծ չի մնացել դատական գործընթացներից, որոնք տևել են մեկից մինչև յոթը տարի:

Չնայած նշված հայցերից մի մասը մերժվել են, սակայն նշված ժամանակահատվածում հրապարակում կատարած անձինք ստիպված են եղել, էապես նվազեցնել քննադատության ծավալները և չբարձրաձայնել նշվածի մասին մինչև գործ վերջնական ավարտը, կրել փաստաբանական և այլ լրացուցիչ ծախսեր :

Սակայն, հաշվի առնելով այն հանգամանքը, որ Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսդրությամբ

նախատեսված չեն առաջին ատյանի դատարանում գործերի քննության կոնկրետ դատավարական ժամկետներ, միայն սահմանված է դրա ողջամիտ քննելու անհրաժեշտության մասին (ի տարբերություն վերադաս դատական ատյանների՝ վերաքննիչ և վճռաբեկ բողոքի համար, որով վերաքննիչ դատարանի համար սահմանված է 6 /վեց/ ամիս բողոքի քննության դատավարական ժամկետ, իսկ վճռաբեկ դատարանի կողմից վարույթ ընդունելու համար 3 /երեք/ ամիս ժամկետներ, ինչպես նաև դատական ակտի բողոքարկման համար սահմանված 1 (մեկ) ամսյա ժամկետները), ուստի նման պայմաններում նշված դատավարական գործընթացները, այդ թվում և հայցվորների անհարկի ձգձգումների արդյունքում տևում են տարիներ, իսկ դրանց վերադասության կարգով բողոքարկումների արդյունքնում՝ առնվազն ևս 1 (մեկ) տարի:

Այսինքն, կատարված վերլուծությունները թույլ են տալիս պնդելու, որ նշված հայցերի հարուցման հիմնական նպատակը ոչ թե հայցվորի պատվի, արժանապատվության կամ գործարար համբավի պաշտպանությունն է, այլ քննադատողի՝ բնապահպանին, իրավապաշտպանին, լրագրողին լռեցնելը, հանրային ու հրապարակային գործունեությունը ճնշելը, հաճախ օգտագործելով կողմերի միջև ուժերի անհավասարակշռության փաստը:

Հաշվի առնելով, որ Հայաստանի Հանրապետությունում առկա չեն ընդդեմ հանրային մասնակցության դատական գործընթացների հատուկ իրավակարգավորումներ, ներառյալ՝ հարցի լուծման արտադատական կարգ և հակա SLAPP (ANTI-SLAPP) օրենքներ, հետևաբար դրանք դատարաններում քննվում են ընդհանուր դատավարական կարգով, որոնք որպես կանոն տևում են մեկ տարուց մինչև մի քանի տարի:

Օրենսդրական միակ գործիքակազմը ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքով սահմանված արագացված դատաքննության կարգի կիրառումն է այն պարագայում, երբ դատարանը գա այն եզրահանգման, որ ներկայացված հայցն ակնհայտ անհիմն է, մասնավորապես՝ եթե դրանում ձևակերպված հայցապահանջն ակնհայտորեն ոչ իրավաչափ է (ակնհայտորեն ենթակա է մերժման՝ անկախ դրա հիմքում դրված փաստերից) կամ հայցվորի կողմից դրա հիմքում դրված փաստերի հիման վրա ակնհայտորեն ենթակա է մերժման կամ ներկայացվել է ոչ պատշաճ հայցվորի կողմից կամ ոչ պատշաճ պատասխանողի դեմ:

2024 թվականի ապրիլի 11-ին Եվրախորհրդարանը ընդունեց «Հանրային մասնակցության մեջ ներգրավված անձանց ակնհայտ անհիմն հայցերից կամ չարաշահվող դատական գործընթացներից պաշտպանելու մասին»

(«Ռազմավարական հայցեր ընդդեմ հանրային մասնակցության») (EU) 2024/1069 Հրահանգը և SLAPP-երի դեմ պայքարի վերաբերյալ առաջարկությունը, որով նախատեսվում է նվազագույն միջոցներ, որոնք եվրոպական միության անդամ պետությունները պետք է ձեռնարկեն SLAPP-երի դեմ պայքարելու ուղղությամբ: Հայաստանի Հանրապետությունը եվրոպական միության անդամ պետություն չէ, սկայն Հայաստանի համար չի կրում սակայն 2017 թվականի նոյեմբերի 24-ին ստորագրել է Համապարփակ և ընդլայնված գործընկերության համաձայնագիրը (ՀԸԳՀ), որով ընդունել է հանձնառություն իր օրենսդրությունն աստիճանաբար Եվրոպական միության օրենսդրության համապատասխան մասերին մոտարկելու վերաբերյալ :

Առաջարկությունը նաև նախատեսում է, որ հանրային մասնակցության դեմ ուղղված բոլոր չարաշահող դատական գործընթացներում պետք է հասանելի լինեն վաղ փուլերում հայցերի մերժման մեխանիզմներ `

**Եզրահանգում**

«Ռազմավարական հայցերն ընդդեմ հանրային մասնակցության» հայցերն որպես կանոն, ուղղված են բնապահպաններին, իրավապաշտպանների, լրագրողների, հանրային գործունեություն ծավալող այլ անձանց դեմ:

Նմանատիպ հայցերը ներկայացվում են մասնավոր հանքարդյունաբերող և այլ կազմակերպությունների, պետական մարմինների, քաղաքական գործիչների, բարձրաստիճան պաշտոնատար անձանց կողմից, որոց հիմնական նպատակն է.

1. կանխելու, զսպելու, սահմանափակելու հանրային հետաքրքրություն ներկայացնող հարցերի վերաբերյալ խոսքի ազատ արտահայտումը և հանրային մասնակցության հետ կապված իրավունքների իրացումը
2. Հայցվորները հատկապես մեծ ու անհամաչափ պահանջներ են ներկայացում, կիրառում են դատավարական տարբեր հնարքներ՝ դատական ընթացակարգերը երկարաձգելու ու ավելի ծախսատար դարձնելու նպատակով

Այսինքն, որպես կանոն ներկայացված հայցերը դրսևորվում են հետևյալ կերպով.

(ա) պահանջի կամ դրա մի մասի անհամաչափ, կամ անհիմն բնույթ, ներառյալ փոխհատուցման գումարի մեծ չափը

(բ) հայցվորի կամ նրա հետ փոխկապակցված անձանց կողմից նմանատիպ հարցերի վերաբերյալ հարուցված բազմաթիվ վարույթների առկայություն.

(գ) հայցվորի կողմից հետապնդումը կամ սպառնալիքներ՝ վարույթի հարուցումից առաջ, ինչպես նաև դրա ընթացքում, ինչպես նաև հայցվորի կողմից նմանատիպ վարքագիծը նմանատիպ կամ զուգահեռ գործերով:

(դ) անբարեխղճորեն դատավարական մարտավարությունների կիրառումը, ինչպիսիք են դատավարության ձգձգումը, գործերի դադարեցումը դատավարության ավելի ուշ փուլում

**Առաջարակություն.**

-Նախաձեռնել հակա SLAPP (ANTI-SLAPP) օրենքներ և համապատասխան իրավական կարգավորումներ՝ SLAPP դատական գործընթացներում ներկայացված հայցերը վաղ փուլերում մերժման համար ՝ 2024 թվականի ապրիլի 11-ին Եվրախորհրդարանի կոմղի ընդունված՝ «Հանրային մասնակցության մեջ ներգրավված անձանց ակնհայտ անհիմն հայցերից կամ չարաշահվող դատական գործընթացներից պաշտպանելու մասին» («Ռազմավարական հայցեր ընդդեմ հանրային մասնակցության») (EU) 2024/1069 Հրահանգի և SLAPP-երի դեմ պայքարի վերաբերյալ առաջարկությունի համատեքստում, քանզի Հայաստանի Հանրապետությունում SLAPP գործընթացների շարունակական զարգացումը և SLAPP (ANTI-SLAPP) օրենքներ և համապատասխան իրավական կարգավորումների բացակայությունը համահունչ չէ 2017 թվականի նոյեմբերի 24-ին ստորագրված է Համապարփակ և ընդլայնված գործընկերության համաձայնագրի տրամաբանությանը:

- մշակել և ներդնել արտադատական ընթացակարգային երաշխիքներ՝ խոսքի ազատության և հանրային մասնակցության իրավունքը պաշտպանելու և իրավական պահանջների չարաշահումը կանխելու համար,:

Վերը նշված առաջարկությունների արդյունքում ակնկալվում է.

1. բացառել *SLAPP* հայցերի կիրառմամբ ցանկացած ճնշում բնապահպանների ու իրավապաշտպանների հասարակական կազմակերպությունների, անհատների նկատմամբ՝ շրջակա միջավայրի պահպանության հարցերում վերջիններիս մասնակցության իրավունքն իրացնելիս
2. *SLAPP* դատավարական գործընթացում պատասխանող կողմի փոստաբանական և այլ ծախսերի ամբողջական վերականգնման իրավակարգավորումների նախատեսում, ինչպես նաև նման հայցերի պարագայում՝ պետության կողմից անվճար իրավաբանական օգնության տրամադրման ապահովման երաշխիքների սահմանում

3. *SLAPP* դատավարական գործընթացները հնարավորին սեղմ ժամկետում ավարտելու իրավակարգավորումների նախատեսում:

**Փաստաբան՝ Գուրգեն Թորոսյան**
**ք. Երևան, 25 սեպտեմբերի 2025թ.**

*Սույն զեկույցը պատրաստվել է Կանաչ Հայաստան բնապահպանական կրթական ՀԿ-ի պատվերով՝ Մարդու Իրավունքների Ծվեդական Հիմնադրամի հետ համատեղ իրականացվող *Advancing Anti-SLAPP Measures in Armenia* ծրագրի շրջանակում՝ Ծվեդական Ինստիտուտի ֆինանսական աջակցությամբ: Զեկույցում արտահայտված տեսակետները պատկանում են հեղինակին և պարտադիր չէ, որ համընկնեն դոնորի տեսակետների հետ: